ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Գովազդի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-1025-12.03.2025-ՏՀ-011/0) վերաբերյալ

Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Ղահրամանյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Գովազդի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Պ-1025-12.03.2025-ՏՀ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծի 1-ին հոդվածով «Գովազդի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 15-րդ մասում նախատեսվում է հանել «,Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների» բառերը:

Օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ «Արգելվում է շահումով խաղի կամ ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ վիճակախաղի (այդ թվում՝ տոտալիզատորի) կամ դրանց կազմակերպիչների ցանկացած տեսակի գովազդը, բացառությամբ (…) Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների (…)»:

Հարկ է նկատել, որ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժգ» կետում սահմանված է, որ «Շահումով խաղերի, խաղատների գործունեության կազմակերպիչը պարտավոր է չիրականացնել շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ դրանց կազմակերպիչների գովազդը, այդ թվում՝ (…) Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների»:

Միաժամանակ նշենք, որ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի (օրենքն ուժի մեջ է մտել 2024 թվականի հուլիսի 1-ից) 58-րդ հոդվածի 9-րդ մասում սահմանված է, որ «Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված օրվանից ուժը կորցրած ճանաչել «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքը և «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքը»: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքի՝ սույն հոդվածի 3-րդ մասում չնշված դրույթները գործողության մեջ են դրվում սույն օրենքի

23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով օպերատոր սահմանելու օրվանից հետո՝ վեցերորդ ամիսը լրանալու հաջորդ օրը»:

Տվյալ դեպքում, քանի դեռ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքը գործում է և ուժը կորցրած չի ճանաչվել, առաջարկում ենք «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժգ» կետում ևս «Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների» բառերը հանել իրավակարգավորումների համապատասխանությունը միմյանց ապահովելու նպատակով:

2. Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված առաջարկության հիման վրա ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)
02.04.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծի ընդունմամբ առաջանում է Նախագծին առնչվող այլ օրենքի փոփոխության անհրաժեշտություն: Մասնավորապես՝ սույն եզրակացության 1-ին կետում նշված դիտարկման հիման վրա անհրաժեշտ է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժգ» կետում կատարել համապատասխան փոփոխություն:

Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՖՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)
02.04.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է արգելել շահումով խաղի կամ ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ վիճակախաղի (այդ թվում՝ տոտալիզատորի) կամ դրանց կազմակերպիչների կողմից Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում գովազդի տեղադրումը:

Ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագիծը նախատեսվում է ուժի մեջ մտցնել 2025 թվականի հունիսի 1-ից, ապա այդ պարագայում խնդրահարույց է դառնում նշված վայրերում արտաքին գովազդ տեղադրելու

համար արդեն իսկ կնքված պայմանագրերի հետագա իրականացման (այդ թվում՝ նաև ֆինանսական պարտավորությունների կատարման կամ արդեն իսկ կատարվածների փոխհատուցման) հարցը: Կարծում ենք, օրենքի ուժի մեջ մտնելու դրույթը վերանայման կարիք ունի՝ այն տեսանկյունից, որ 2025 թվականի հունիսի 1-ից հետո գործողության մեջ գտնվող՝ գովազդի տեղադրման պայմանագրի սուբյեկտներն օրենքի ընդունման հետևանքով ֆինանսական անհարկի կորուստներ չունենան:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից վերաիմաստավորման և լրամշակման կարիք ունի՝ վերը նշված դիտողությունը հաշվի առնելու տեսանկյունից:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան
(հեռ.՝ 011 513-603)
24.03.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Ղահրամանյանի կողմից ներկայացվել է ««Գովազդի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

Նախագծի ընդունումը պայմանավորված է խաղային գովազդների տեղակայման սահմանափակման անհրաժեշտությամբ:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է կանոնակարգել խաղային գովազդների տեղադրման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես, Նախագծով առաջարկվում է արգելք սահմանել Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտներում շահումով խաղի կամ ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ վիճակախաղի գովազդի տեղադրման համար:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը սոցիալական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Մ. Դալլաքյան (հեռ.՝ 011-513-235, 12-35)
31.03.2025թ.